ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«30» դեկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 3282-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Միսակ Հովհաննեսի Մարգարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 32132/2022/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Միսակ Հովհաննեսի Մարգարյանի (Հասցե՝ Շիրակ, Գյումրի, Գ. Նժդեհի փ., 4 շենք, 55-56 բն., ՀՎՀՀ՝ 57394285, ՀԾՀ՝ 3614920658) չկատարված հարկային պարտավորությունը 29.11.2022թ-ի դրությամբ կազմում է 1.700.790 դրամ, այդ թվում հարկ՝ 1.197.950 դրամ, տույժ՝ 502.840 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 09.12.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեից տրամադրված տեղեկությունների համաձայն Միսակ Հովհաննեսի Մարգարյանի կողմից 05.11.2018թ. օտարվել է Կոտայքի մարզ, համայնք Նոր Արտամետ 1-ին փողոց 79 կաթսայատուն հասցեում գտնվող գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 12.125.000 ՀՀ դրամ: Նշված անշարժ գույքից հողամասի նպատակային նշանակությունը եղել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, իսկ շինության նպատակային նշանակությունը՝ արտադրական:

ՀՀ հարկային օրենսգրքի (մինչև 29.06.2019 թ-ի գործող խմբագրությամբ, այսուհետ՝ Օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ տվյալ գույքի օտարումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում և գույքի օտարումից ստացվող եկամուտները այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասին եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Ֆիզիկական անձ Միսակ Հովհաննեսի Մարգարյանի կողմից չի ներկայացվել 2018 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 29.11.2022թ-ի դրությամբ կազմում է 1.700.790 դրամ, այդ թվում հարկ՝ 1.197.950 դրամ, տույժ՝ 502.840 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի օտարման գործարքի արդյունքում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, ինչպես նաև հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով հաշվարկված տույժերից: Հաշվարկը կատարվել է հիմք ընդունելով Օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված տեսակարար կշիռների մեթոդը:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՈՐՈՇԵՑԻ

Ֆիզիկական անձ Միսակ Հովհաննեսի Մարգարյանից գանձել **1.700.790** դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

29.11.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	22.04.2019թ	1.197.950	502.840	-	1.700.790	պետական բյուջե	900008000490

1. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ Սեդա Ասատրյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: